

ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՅ ԼԵզՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վ. Վ. ԳԱՔՐԻԵԼՅԱՆ

Բայի եղանակը քերականական այն կատեգորիաներից է, որոնք մշտապես վեճերի առարկա են թե՛ ընդհանուր լեզվաբանության, թե՛ առանձին վերցրած որևէ լեզվի ուսումնասիրության մեջ: Եղանակները քննելիս հարկ է պատասխանել առնվազն հետևյալ հարցերին. ի՞նչ է բայի եղանակը (ինչպես բնորոշել և սահմանել այն), քանի՞ եղանակ կա սվայ լեզվում և ինչպե՞ս անվանել դրանք, ո՞ր բայաձևերը, ո՞ր եղանակների տակ պետք է դասակարգել: Ակնհայտ է, որ այս հարցադրումների պատասխանները զգալի չափով կախված են մեկը մյուսից, իսկ առաջին հարցի պատասխանը մյուսների համար ունի ելակետային նշանակություն:

Եղանակը հայ լեզվաբանության մեջ տարբեր սահմանումներ է ունեցել: Գ. Ավետիքյանը գրում է, որ բայը իր «ծայրը կերպ կերպ» փոփոխելով՝ տարբեր նշանակություններ է ձեռք բերում, որոնք եղանակ են կոչվում¹, ըստ Ա. Այտընյանի՝ եղանակը ցույց է տալիս, թե գործողությունն ինչ կերպով «կը բացատրուի կամ կը զրցուի»², ըստ Գր. Վանցյանի՝ եղանակը գործողությունը կատարելու կերպն է³, ըստ Ն. Մելիք-Թաևուզյանի՝ բայի ցույց տված գործողությունները կատարվում են զանազան ձևերով («որոշակի, կասկածաւոր, թեականասպեւ, հրամայական»⁴). դրանք էլ հենց եղանակներն են: Նման սահմանումները կամ բացատրությունները չի կարելի գիտական համարել մի քանի պատճառներով. հստակ չեն, իրարից չեն զանազանում տարբեր հասկացություններ (օրինակ՝ բայի վերջավորությունը փոփոխվում է ոչ անպայմանորեն եղանակ ցույց տալու համար, այլ նաև դեմք և թիվ կամ միայն դեմք և թիվ) և ի վերջո ճիշտ չեն: Իր «Ընդհանուր տեսության արեւելեան նոր գրատր լեզուի հայոց» (1870 թ.) աշխատության մեջ Ստ. Պալասանյանը գրում է, թե գործողի և նրա գործողության միջև կա չորս տեսակ հարաբերություն՝ դեմք, թիվ, եղանակ և ժամանակ, իսկ «Քերականութիւն մայրենի լեզուի» աշխատության մեջ եղանակը պարզապես կոչում է «միտք հայտնելու ձև»:

Մ. Աբեղյանը եղանակները բնութագրելիս ելակետ է ընդունում Կանտի՝ կատեգորիաների տեսությունը և առանձնացնում է դատողության խոսքերը և ցանկության խոսքերը: Եղանակը նա բնութագրում է որպես «խոսողի վերաբերմունքը խոսքի բովանդակության (կատմամբ»⁵: Հր. Աճառյանը «Լիակատար քերականության» մեջ բայի եղանակ ասելով հասկանում է «խոսող անձի հոգեկան վիճակի արտահայտության ձևը»⁶, սակայն անմիջապես էլ ընդունում է, թե քանի որ այդպիսի ձևերը չափազանց բազմազան կլինեին, «սարդիկ չափավորել են այդ բոլորը և ստեղծել են միայն մի քանի եղանակներ, մնացյալի համար բավականանալով գործածել հարակից մակբայներ, օժանդակ բայեր և այլն»: Գ. Լևակը⁷ և Էդ. Աղայանը⁸ եղանակը բնորոշում են որպես խոսողի վերաբերմունք գործո-

¹ Գ. Ավետիքյան, Քերականութիւն հայկական, Վեճեսիկ, 1819, էջ 72:

² Ա. Այտընյան, Քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1888, էջ 41:

³ Գր. Վանցյան, Դպրոցական քերականութիւն, Ալեքսանդրապոլ, 1906, էջ 35:

⁴ Ն. Մելիք-Թաւուզյան, Աշխարհաբարի քերականութիւնը, Օուշի, 1898, էջ 48:

⁵ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 220:

⁶ Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Եր., 1959, հտ. 4, գիրք Ա, էջ 21:

⁷ Գ. Լևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 308:

⁸ Էդ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Եր., 1967, էջ 366:

դրության նկատմամբ: Այս սահմանումն է տալիս եղանակների ոճական կիրառություններին նկիրված իր աշխատության մեջ Պ. Պողոսյանը⁹:

Այս սահմանումներն ունեն խոցելի տեղեր, օրինակ՝ խոսողը գործողության նկատմամբ կարող է արտահայտել դրական կամ ժխտական վերաբերմունք, հույզեր, զայրույթ, անսարքերություն: այս դեպքերում դա կլինի վերաբերմունք գործողության նկատմամբ, բայց բնդհանուր ոչինչ չի ունենա այն եղանակային ձևերի հետ, որոնք ընդունված է դաստասել ընդունված (թեկուզ պայմանականորեն) եռանակների անունների տակ: «Հոգեկան վիճակի արտահայտության ձևի» օրինակ կարող է ծառայել թերևս միայն ըզձական եղանակը, այդպիսին ոչ մի կերպ չի կարող լինել պայմանականը (եթե ընդունենք դրա գոյությունը հայերենում), և ընդհանրապես մյուս եղանակների համար էլ դժվար է անվանել այն հոգեվիճակը, որ հրանք իբր արտահայտում են: Բացի այդ, նույն եղանակի տարբեր ձևերով կարող են արտահայտվել տարբեր հոգեկան վիճակներ (օրինակ՝ սահմանական եղանակի ձևերով կարելի է արտահայտել ուրախություն, տխրություն, կարոտ, զայրույթ և այլն): Այն, ինչ իրականում (համեմայն դեպս մեր կարծիքով) արտահայտում է եղանակի կատեգորիան, առավել ճշգրիտ սահմանված է ավելի ուշ շրջանի լեզվաբանների աշխատություններում:

Այսպես, Հ. Բարսեղյանը գտնում է, որ «եղանակի քերականական կատեգորիան արտահայտում է գործողության եղանակը, այսինքն՝ ցույց է տալիս խոսողի վերաբերմունքը գործողության և իրականության հարաբերման նկատմամբ»¹⁰: Թեև մենք համոզված չենք, որ այս սահմանման երկու մասերը («ալսինքն» բառից առաջ և հետո) հավասարաթեք են, երկրորդ մասը գտնում ենք ճիշտ:

Գ. Զահուկյանը տալիս է եղանակի կատեգորիայի առավել լրիվ սահմանումը. «... բուն եղանակը ոչ այլ ինչ է, եթե ոչ հաղորդման (խոսքի) եղանակավորման (մոդալականության) մասնակի դրսևորումը բայի խոնարհման հարացույցի մեջ՝ հատուկ եղանականիշ թեքությունների օգնությամբ: Եղանակավորումը հաղորդող (խոսող) սուբյեկտի և հաղորդման օբյեկտիվ բովանդակության, այլ կերպ ասած՝ հաղորդողի վերաբերմունքի դրսևորումն է ոչ միայն բայի հարացույցի այլև եղանականիշ բառերի, ինտոնացիայի, շարադասության միջոցով»¹¹: Ս. Արրահամյանը փաստորեն կրկնում է Հ. Բարսեղյանի սահմանումը՝ «... բայի եղանակն արտահայտում է խոսողի վերաբերմունքը գործողության նկատմամբ, վերջինս՝ իրականությանը հարաբերելու տեսակետից»¹²:

Հ. Պետրոսյանի բնորոշմամբ «բայաեղանակն արտահայտում է խոսողի ուրույն տեսանկյունը գործողության կատարման նկատմամբ, կապված է խոսողի կողմից գործողության սուբյեկտիվ գնահատության հետ»¹³:

Եղանակի հասկացության այս տարբեր ըմբռումներով էլ պայմանավորված է տարբեր եղանակների ընդունումը հայ լեզվաբանության մեջ: Պետք է նշել, որ բազմաթիվ հեղինակներ էլ խոսում են կոնկրետ եղանակների մասին, առանց գոնե մեկ տողով սահմանելու կամ բացատրելու, թե ինչ են հասկանում եղանակ ասելով:

Եղանակների քանակի հարցում կարծիքները իրարից շատ չեն հեռանում: 1711 թ. մինչև օրս վեճի առարկա է չորս կամ հինգ եղանակ ճանաչելը: Գրաբարի և արևմտահայերենի համար առավել համերաշխորեն ընդունվում է երեք եղանակ, իսկ արևելահայ աշխարհաբարի համար երեք եղանակ ճանաչողները սակավաթիվ են (Ն. Տեր-Ղևոնդյան, Ս. Տեր-Մաթևոսյան): Ն. Ռուսինյանը առաջարկում էր թողնել միայն մեկ՝ «պատմողական» եղանակ, սակայն դրա անվան տակ հասկանում էր առնվազն երկուսը՝ սահմանականը և հրամայականը: Դ. Աղայանը 1874 թ. քննադատելով Ստ. Պալասանյանի «Քերականութիւն մայրենի լեզուի» դասագիրքը¹⁴, ասում է, որ բայն ընդհանրապես եղանակ չունի, եղանակ ունեն միայն ամբողջական նախադասությունները: Աղայանը ներկայացնում է խոնարհման իր աղյուսակը՝ «առանց եղանակների», բայց այդ աղյուսակում այնուամենայնիվ տեսնում ենք հրամայական եղանակի ձևերը՝ հենց «հրամայական» անվան տակ: Ստացվում է հակասություն. մի կողմից հեղինակը բայի համար եղանակներ չի ընդունում, մյուս կողմից

⁹ Պ. Պողոսյան, Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Եր., 1959, էջ 26:

¹⁰ Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Եր., 1958, էջ 178:

¹¹ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 227—228:

¹² Ս. Արրահամյան, Մասնականակից հայերենի քերականություն, Եր., 1969, էջ 169:

¹³ Հ. Պետրոսյան, Արդի հայերենի բայաեղանակային տիրույթների հարացուցային շարքերը, Հայոց լեզու և գրականություն, Եր., 1985, № 5—8, էջ 5:

¹⁴ Դ. Աղայան, Ս. Պալասանեաց, «Քերականութիւն մայրենի լեզուի», «Մեղու Հայաստանի», 1874, № 89:

առանձնացնում է հրամայականի ձևերը: Եթե այդ ձևերն այնուամենայնիվ որպես առանձին եղանակի ձևեր չեն ընդունվում, ապա պետք է բացատրվեն, թե ինչի հիման վրա են առանձնացվել այդ ձևերը: Այդպիսի հիմնավորում Աղայանը չի տալիս: Ղ. Աղայանի մտնեցումը այս հարցին որևէ հետևող, որքան մեզ հայտնի է, չի ունեցել:

Ստորև ներկայացնում ենք մի աղյուսակ, ուր ամփոփված են աշխարհաբարի բայի եղանակների մասին հայ լեզվաբանների (հայագի չէ միայն Իվ. Ծիլակաձեն) տեսակետները՝ թե ով քանի եղանակ է ընդունել, և որոնք են դրանք: Աղյուսակը կազմված է ըստ ժամանակագրական սկզբունքի, նշված են այն տարեթվերը, երբ հրատարակվել են եղանակների մասին հեղինակների տվյալ կարծիքը պարունակող աշխատությունները: Աղյուսակում համեմատության համար բերված է մեկ օրինակ, երբ հեղինակը (Մ. Էմին) իր չեղանկարծությունը գրել է գրաբարի համար, մեկ օրինակ, երբ աշխատության մեջ խառն են գրաբարի և աշխարհաբարի ձևերը (Գ. Ավետիսյան) և մեկ օրինակ, երբ հեղինակը (Ա. Այտընյան) տարբերակում չի մտցրել արևելահայերենի և արևմտահայերենի ձևերի միջև: Աղյուսակը կազմելիս հաշվի չի առնվել քերականի առավել կամ պակաս հայտնի կամ հեղինակավոր լինելը, ընդգրկվել են մեզ հայտնի բոլոր հեղինակները, ովքեր գրել են աշխատություններ կամ դասագրքեր աշխարհաբարի բայի մասին, կամ որևէ կերպ անդրադարձել են մեզ հետաքրքրող՝ եղանակների հարցին:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ նույն անվան ընդունելը տարբեր լեզվաբանների յողմից, չի նշանակում նույն բովանդակության ընդունում, այն է՝ մեկը մի եղանակի տակ կարող է մտցնել բայաձևեր, որոնք մեկ ուրիշը մտցնում է այլ եղանակի տակ: Որոշ հեղինակներ նախապատվություն չեն տվել «պայմանական» կամ «ենթադրական» անուններից որևէ մեկին, այլ հավասարապես գործածել երկուսն էլ: Նման դեպքերում այդ եղանակի գոյությունը տվյալ հեղինակի մոտ հաստատող նշանները առնված են փակագծերի մեջ, շարժված դեպի աղյուսակի ընդհանուր պատր և միացված գծիկով: Մի քանի հեղինակներ էլ նշում են, որ իրենք պահպանում են ավանդական անունները զուտ շփոթություն չառաջացնելու նպատակով:

Ինչպես պարզ է դառնում աղյուսակից, ավելի քան երկու հարյուր տարվա ընթացքում և ոչ մի քերական չի դրել սահմանական և հրամայական եղանակների լինել-չլինելու հարցը (Ղ. Աղայանի տեսակետը չունի բավարար լեզվաբանական հիմնավորում): Ջարմանայի է, որ Մ. Էմինը չի նշել գրաբարի համար բոլորի կողմից ընդունված ստորադասական եղանակը, թեև այն երկար ժամանակ ընդունվում էր նաև աշխարհաբարի համար:

Մեր խնդիրների մեջ չի մտնում առանձին եղանակների ձևաբանական և իմաստային բնությունը, սակայն ստորադասական եղանակի մասին երկու խոսք անհրաժեշտ է ասել: Գրաբարի ստորադասական եղանակի ձևերի աստիճանական վերացումը, սահմանականի ձևերի՝ ստորադասականի իմաստով գործածվելը, միջին հայերենում կը մասնիկի առաջ գալիս այս երկու եղանակների տարբերակումը, նրանց հետագա զարգացումը աշխարհաբարում մանրամասն ուսումնասիրվել և լուսաբանվել են հայ լեզվաբանության մեջ, հատկապես Ա. Այտընյանի, Հր. Աճառյանի, Մ. Աբեղյանի աշխատություններում: Մ. Աբեղյանը ցույց տվեց, որ հին հնդեվրոպական լեզուներում եղել են սահմանական, հրամայական, ստորադասական և ըղձական եղանակները, քայքայում որ շատ ոլորտներում ստորադասականը և ըղձականը շոշափել են միմյանց, դրանք հետագայում խառնվել են իրար. այդպես է եղել նաև հայերենում: Աբեղյանը ստորադասական անվան փոխարեն ընդունում է ըղձականը նաև աշխարհաբարում և ենթադրական եղանակների, կամ կարելի է և այդ ըղձականը բաժանում է ըղձականի և ենթադրականի: Նա նշում է, որ կասելի՝ ստորադասականը բաժանում է ըղձականի և ենթադրականի: Նա նշում է, որ կասելի է պահել նաև ընդհանուր ըղձական անվանումը, սակայն այս դեպքում հարկ կլինի անհրաժեշտ կերպով ցանկության ըղձական (զճամ, զճայի ձևեր) և կարելիության ըղձական (կզբու, կզճայի ձևեր)¹⁵: 1908 թվից (Գր. Վանցյան) երեք և կես տասնամյակ «ստորադասական եղանակ» հասկացությունը փաստորեն դադարում է գործածվել: 1941 թ. այն վերականգնելու մի անհաջող փորձ է անում Ստ. Լիսիցյանը¹⁶: Արևմտահայերենին մոտիկաբան աշխատությունները չհաշված, այս անվանումը արևելահայ լեզվաբանության մեջ այլևս չի գործածվում:

Ինչպես արդեն նշվեց, նույն անվանումների ընդունումը սակայն չի նշանակում նույն բայաձևերի ընդունում որպես տվյալ եղանակի ձևեր: Տարակարծությունները հիմնականում վերաբերում են կ մասնիկով և պիտի եղանակի բառով կազմված ձևերի պատկանելու-

¹⁵ Տե՛ս Մ. Աբեղյան, *Ղզվ. աշխ.*, էջ 827:

¹⁶ Ստ. Լիսիցյան, *Ժամանակակից հայերեն լեզվի խոնարհումը*, ԵՊՀ գիտական աշխատություններ, Եր., 1941, հտ. 18:

Հեղինակներ	Այվածք	Եղանակների անվանումները								Նմ	ուսացույց	
		Սկիզբ	Միջին	Վերջ	Գործող	Ստոր	Միջին	Վերջ	Գործող			
1. Սկիզբ (Շրջեր)	1711											
2. Գ. Ա. Ետիջյան*	1819											
3. Խ. Աբովյան	1897—8											
4. Մ. Էսին*	1848											
5. Ա. Այվերյան***	1866											
6. Ստ. Գալստյան	1870											
7. Ստ. Գալստյան	1874											
8. Դ. Աղայան	1874	0/1										
9. Ա. Բանարյան	1879											
10. Ն. Մելիք-Քանգյան	1898											
11. Ն. Տեր-Ղևորյան	1898											
12. Ա. Արաբաջյան	1908											
13. Հար. Քումանյան	1904											
14. Մ. Արսլյան	1906											
15. Գր. Վանցյան	1906											
16. Հ. Դարբաջյան	1918											
17. Հար. Պետրոսյան	1927											
18. Ա. Տեր-Մաթևոսյան	1969											
19. Ստ. Լիսիցյան	1941											
20. Ար. Դարբյան	1952											
21. Հ. Բարսեղյան	1958											
22. Ս. Աբրահամյան	1958											
23. Գ. Սևակ	1955											
24. Բ. Ջումարյան	1958											
25. Գ. Քոչոսյան	1959											
26. Էր. Աղայան	1968											
27. Իվ. Շիլական	1964											
28. Էր. Աղայան	1967											
29. Գ. Ջանուկյան	1968											
30. Բ. Իշխանյան	1971											
31. Ս. Անթոնյան	1974											
32. Ս. Դազարյան	1981											
33. Հ. Պետրոսյան	1985											
34. Էր. Աղայան, Հ. Բարսեղյան	1987											

* — վերաբերում է գրաբարին
 ** — գրաբարի և աշխարհաբարի
 *** — արևելահայերենի և արևմտահայերենի ձևերը չեն տարբերակվում

թյանը այս կամ այն եղանակին: Տարբեր հեղինակներ դրանք համարում են տարբեր եղանակների ձևեր:

Գոյություն ունի կ- (կը, կու) մասնիկի ծագման մի քանի տեսակետ: Արսեն Վարդապետ Այտընյանը գտնում էր, որ կը-ն ծագել է կու-ից, որն էլ նախնական կայ ու կապակցության հնչունափոխված ձևն է: Քանի որ միջին հայերենում արդեն չկային գրաբարի ստորադասական ձևերը, և գրաբարի սահմանակալը գործածվում էր սահմանակալին, սահմանական ապառնու և ստորադասականի ինաստով, հարկ էր, որ պարզություն մտցվեր այդ խառնաշփոթության մեջ*: Այս նպատակի համար առավել հարմար էր մի այնպիսի լույս, որ կարող էր գործածվել միայն մեկ եղանակային իմաստով՝ այդպիսով պարզ դարձնելով, թե իր հետ կապակցության մեջ եղած բայը ո՞ր եղանակին է պատկանում: Իր իմաստային առանձնահատկության (գուցեն կարճության) շնորհիվ այդպիսի բայի դեր է ստանձնում կամ բայը. «Չորօրինակ երբ կ'ըստեր կայ ու նայի, անմիջապես նայի բային եղանակը կ'որոշուր քովի կայ աելադրութամբ, եւ չէր կրնար ստորադասականի հետ շփոթիլ կամ ապառնոյ»¹⁸: Այս կայ ու ձևը, որ «կամ» բայի և «ու» շաղկապի կապակցությունն է, ըստ Այտընյանի հետագայում ընդհանրացվել է և գործածվել բոլոր դեմքերի համար: Մինչև 1919 ժամանակ Այտընյանը նշում է, որ բավարար օրինակներ չունի ընդհանրացում էատարելու, թե այս կապակցությունը ընդգրկել է ներկա և անկատար ժամանակներն ամբողջովին: Այտընյանից հետո կը մասնիկի ծագման մասին խոսել են գերմանացի հայագետ Հ. Պետերմանը (ըստ որի կը-ն ծագել է կամ բառից), Բ. Պատկանյանը, Ալ. Թոմսոնը, Կարստը: Այտընյանի հետ համաձայն է Հր. Աճառյանը, որն ավելացնում է, թե միջին հայերենի նախնական շրջանում «փորձ եղավ նոր ստորադասական կազմելու կենամ բայի օգնությամբ, որ ու շաղկապով միանում էր բուն բայի ներկային»¹⁹, սակայն, քանի որ առաջ եկավ կայ ու ձևը սահմանական ներկա կազմելու համար, կենամ ու ձևը դուրս մղվեց, որովհետև վերացավ դրա անհրաժեշտությունը, իսկ երկու ձևերից բնականաբար հաղթող դուրս եկավ ավելի կարճը:

Կ- մասնիկի ստացման այլ տեսակետ է առաջ քաշել Մ. Աբեղյանը: Մերժելով Այտընյանի տեսակետը, նա մեջ է բերում Կարստի կարծիքը, թե կայ ու-ն իբրև կու-ի նախածն «ընդհանրապես ու կանոնավորապես» չի գործածվել և ոչ էլ հաճախ, այլ լույս «հատհատ դեպքերում», և պետք է ապացուցել, որ կայ ու-ից հնչունաբանորեն կարող էր կու ստացվել: Աբեղյանն ավելացնում է, որ չկա մի օրինակ, որ այս ձևը դրված լիներ առաջին կամ երկրորդ դեմքերի հետ, գործածված լիներ անցյալ ժամանակի կամ հոգնակիի հետ:

Ըստ Աբեղյանի կու-ի նախնական ձևը կոյ-ն է, որ սկզբում «ահա» նշանակությամբ անկախ բառ է եղել. «Ահա» բառի, ինչպես և համանիշ բարբառային «հրես», «հրեն», «կո», «նայ» բառերի նշանակությունն, ուրեմն, այնպիսին է, որ դրվելով ներկա ժամանակի մի բայի վրա՝ ցույց է տալիս խոսելու վայրկյանին խոսողի աչքի առաջ կատարվող մի գործողություն»²⁰: Այս գործողությունը, հաստատ ու ակներև լինելով, միայն սահմանական կարող էր լինել: Աբեղյանը նշում է, որ այդ բառի համար հին գրականությունից օրինակներ չկան, բայց բարբառներում այդ բառը շատ կա կո, կո, գո, գո ձևերով:

Արմ. Մուրվալյանը ընդունում է Մ. Աբեղյանի տեսակետը՝ համարելով այն ավելի հիմնավորված և պնդում է, որ կոյ-ը ազգակից է քարթվելական (ճան-մեգրելական) նույնապաշտոն [կոն] (կոն||կո) մասնիկին, որն էլ իր հերթին ծագում է [օկոն] (ոկոն== «պիտի») անկախ բառից²¹»: Կ- (կը) և տ- (տը) մասնիկները Մուրվալյանը համարում է

* Ինչպես նշում է Հր. Աճառյանը, երբ առաջ եկավ կու մասնիկը, տարբերակում մտցվեց սահմ. ներկայի և ապառնու (կու սիրեմ) և ստորադասականի միջև (սիրեմ), սակայն դեռ շփոթվում էին սահմանական ներկան և ապառնին, և լեզուն ստեղծեց նոր ձև. արևմտահայերը կու (կը) ձևը պահեցին սահմ. ներկայի համար և հնարեցին պիտի մասնիկը ապառնիի համար. իսկ արևելահայերը կը ձևը պահեցին ապառնիի համար և ներկայի համար հնարեցին ում ձևը (սիրում եմ)»¹⁷:

¹⁷ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Եր., 1951, էջ 482—483:

¹⁸ Ա. Այտընյան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1886, էջ 77բ:

¹⁹ Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, 1959, հտ. 4, գիրք Ա, էջ 888:

²⁰ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 259:

²¹ Տե՛ս Արմ. Մուրվալյան, Կը- մասնիկը և կը- մասնիկավոր բայերի յուրահատուկ առումները հայերենում, Եր., 1946:

** Հր. Աճառյանը «Լիակատար քերականությունում» գտնում է, որ կը-ն միայն պատահական նմանություն ունի բազմաթիվ այլ լեզուների և բարբառների (բերում է օրինակներ) համահունչ բառերի ու մասնիկների հետ:

իմաստային համարժեքներ, որոնք նախապես ունեցել են «պիտի» ընդհանուր նշանակությունը: Պենեմ և կզրեմ բայաձևերի տարբերությունը ըստ Մուրվալյանի անկատար ու կատարյալ կամ անորոշ ու որոշակի կերպերի տարբերությունն է: Նա նաև գտնում է, որ կը մասնիկը այսպես կոչված կրկնողական կերպի ցուցիչ է, և այդ մասնիկով բայերը արտահայտում են գործողության կրկնության գաղափար ներկա ժամանակում. ապառնի գործողություն արտահայտելիս այդ գաղափարը չի դրսևորվում: Մուրվալյանը գրում է, որ ի տարբերություն քարթվելական լեզուների, ուր կը-ի համարժեք մասնիկը հանդես է գալիս լայի վերջում, հայ գրական լեզվում այն դրվում է բառասկզբում, որոշ բարբառներում՝ վերջում, որոշ բարբառներում՝ ինչպես սկզբից, այնպես էլ վերջից, իսկ որոշ բարբառներում էլ՝ միաժամանակ թե սկզբից, թե վերջից, սակայն այս խոսքերը հաստատող ոչ մի օրինակ չի բերում:

Ս. Ղազարյանը չի ընդունում Մուրվալյանի տեսակետը, ասելով, թե հայերենում կու > կը > կ-ով կազմվում են ավելի քան 24 բարբառների սահմանական ներկա և անկատար ժամանակները, մինչդեռ այդ բարբառները կրողների մեծ մասը չի շփվել քարթվելական բեղերի հետ և, որ «ուրոն» ունի «պիտի», իսկ կը-ն՝ «ախ» իմաստ²²: Իհարկե, համոզիչ չէ բոլոր բարբառների՝ քարթվելական լեզուների հետ շփված չլինելու պատճառով այդ մասնիկը փոխառած լինելու անհնարինությունը, եթե հակված լինենք ընդունելու Արմ. Լուրվալյանի տեսակետը: Ը՛հ՝ որ այդ մասնիկը քարթվելական լեզուների հետ շփված բարբառներին կարող էր անցնել դրանց հետ շփվածներից: Մուրվալյանի տեսակետը հերքող այլ փաստարկներ է բերում Հ. Բարսեղյանը, նշելով, որ նախ՝ Մուրվալյանը չի բերում կը-ի՝ «պիտի» իմաստով գործածություններ, և ապա լեզուն դժվար թե պահպաներ միևնույն նշանակությամբ երկու մասնիկ²³:

Այլ Մարգարյանը մերժում է իրենից առաջ արտահայտած բոլոր կարծիքները, հարեալով, որ նրանցից ոչ մեկը հիմնավորված չէ գրավոր հուշարձաններից քաղված հետևյալողական ապացույցներով: Նա գտնում է, որ շաղկապի առկայությունը «լիովին քացառում է կայ ու ձևից կու ծնվելու հնարավորությունը», որ Աբեղյանը անուշադրության է մատնել Այգեկցու կու-ի կողքին գործածված կու, կ ձևերը, որ կը եղանակիչը առկա է ավելի վաղ հեղինակների (Հեռացի, Ծնորհայի) գործերում և չի կարող «համեմատաբար ուշ ավանդված կու ձևի ժառանգը լինել»²⁴: Կը-ի ծագումը նույնպես կապելով միջին հայերենում հին ստորադասականի և ապառնիի մահացման հետ, Այլ Մարգարյանը նշում է, որ մեռած կամ իմաստավորված եղանակա-ժամանակային ձևերի իմաստների արտահայտման համար մշակվել են ձևաբանական միջոցներ, և էական դեր են ստացել եղանակավորող բայերը: Կամիմ եղանակավորող բայից էլ հենց, ըստ Այլ Մարգարյանի, ծագել է կը մասնիկը: Կամիմ բայի կամական նշանակության և կ-ով ձևերի արտահայտած իմաստների մոտ լինելը հավանական է դարձնում այս տեսակետը, սակայն կամիմ-ից կու(կ) ստանալու հնչյունաբանական հնարավորությունը, ինչպես հարկն է հիմնավորված չէ:

Թեև պիտի բառի վերաբերյալ իրարամերձ (մեզ հայտնի) կարծիքներ չկան իմաստի կամ ծագման առումով, տարբեր են եղել կարծիքները դրանով կազմված բայաձևերը խոնարհման համակարգի մեջ մտցնելու, դրանք որևէ եղանակի բայաձև համարելու շուրջ: Կ-ով և պիտի-ով բայաձևերի իմաստային և եղանակաժամանակային քննությունը այս աշխատանքի խնդիրներից դուրս է, միաժամանակ շատ ավելի ծավալուն, որ հնարավոր լինե՞ր ամփոփել այստեղ, ուստի միայն ներկայացնում ենք մի աղյուսակ, ուր ամփոփ պատկերված է հայ լեզվաբանների մոտեցումը՝ այդ բայաձևերը խոնարհման համակարգերում տեղադրելու:

Ինչպես երևում է աղյուսակից, դասագրքերում և ձեռնարկներում կ-ով ձևերը «ենթադրական/պայմանական անցյալ և ապառնի» և պիտի-ով ձևերը «հարկադրական անցյալ և ապառնի» միանշանակորեն ներկայացնելը առնվազն բարեխիղճ չէր լինի: Այսպես, ներկայացված 27 աշխատություններում կզամ/կզրեմ ձևերը դիտվում են որպես սահմանական ապառնի 18 դեպքում, իսկ որպես ենթադրական ապառնի (կամ ներկա)՝ 8 դեպքում: Ընդ որում, այս 8-ից մեկում (Էդ. Աղայան) սխալ է համարվում «ենթադրական» անվանումը և առաջարկվում է «կանխադրական» (կամ «պոստուլատիվ») անվանումը: Անհրաժեշտ է նշել նաև, որ Էդ. Աղայանը դրանից չորս տարի առաջ գրած մեկ այլ աշխատության մեջ այդ ձևերը համարում է սահմանական ապառնի: Ս. Արբաբաբյանը նույնպես մի դեպքում արանք համարում է սահմանական ապառնի (կզրեմ) և պայմանական անցյալ (կզրեի)

²² Տե՛ս Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 1981, էջ 301—302:

²³ Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., էջ 233:

²⁴ Այլ Մարգարյան, «Կը» եղանակիչի ծագման մասին «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 1, էջ 160—161:

(1959 թ.), ապա փոխում կարծիքը՝ դրանք համարելով ենթադրական ապառնի և ենթադրական անցյալի ապառնի (1969 թ.): Ռ. Իշխանյանը գտնում է, որ եղանակների անվանումներն ընդհանրապես պետք է պայմանականորեն ընդունել և որ «կ և պիտի մասնիկներով կազմված դիմավոր բայերն էլ շատ հաճախ սահմանական են»²⁵ (ընդգծումն իմն է—Վ. Գ.): Հար. Պետրոսյանը²⁶ հայտնում է, որ ողջ տեսական մասը վերցրել է Մ. Աբեղյանի դասագրքից, Ար. Ղարիբյանը Աբեղյանի կողմից ենթադրական անվանված եղանակը կոչում է պայմանական կամ ենթադրական կամ էլ՝ պարզապես պայմանական, Ն. Բարսեղյանը թեև պահում է ենթադրական անվանումը, այնուամենայնիվ չի կարողանում չմատնանշել այդ բայաձևերի ցույց տված ակնհայտորեն սահմանական գործողությունը. «պայմանական կամ ենթադրական եղանակը ցույց է տալիս խոսքի մոմենտից հետո կամ մի անցյալ ժամանակակետում կատարվելիք գործողություն, որի կատարման իսկությունը խոսողը հաստատում է հաստատ համոզմունքով, հաճախ էլ՝ պայմանով կամ ենթադրաբար»²⁷: Ակնհայտ է, որ սահմանման մեջ հակասություն կա. միևնույն բայաձևով արտահայտված «հաստատ համոզմունքով, հաճախ էլ ենթադրաբար» գործողությունները անհամատեղելի են: Ինչևիցե, այս բայաձևերի մասին լեզվաբանները շատ են վիճել, և մենք չենք կարող հավակնել այստեղ ներկայացնել այդ հարցի վերջնական լուծումը:

Միասնականություն չկա նաև կզնայի/կզրեի և պիտի-ով ձևերի դասակարգման հարցում: Թեև կ-ով ձևերի դեպքում այս անգամ գերակշռում են պայմանական/ենթադրական համարվող ձևերը (17 և 4), այստեղ էլ միասնական չէ նրանց ժամանակային դասակարգումը:

Միանշանակ չի եղել նաև վերաբերմունքը պիտի-ով ձևերը խոնարհման համակարգում ընդգրկելու հարցում: Որոշ հեղինակներ պարզապես չեն անդրադարձել դրանց (Ն. Տեր-Ղևոնդյան, Ն. Դադարյան), որոշ հեղինակներ տեղ են տվել միայն ապառնիի ձևերին (Ա. Այտընյան, Ստ. Պալասանյան, Ա. Բահաթրյան, Ա. Արարայան), Ստ. Լիսիցյանը ընդհանրապես մերժել է տեղ տալ դրանց խոնարհման համակարգում, համարելով, որ, նման դեպքում պետք է տեղ տալ նաև գոցե-ով ձևերին և, որ Մ. Աբեղյանը իրավունք չուներ ստանձնացնելու պիտի-ով ձևերը իբրև առանձին՝ հարկարական եղանակ: Մ. Աբեղյանը թեև նշում է, որ կ-ով և պիտի-ով ձևերը կարելի էր և չառնել խոնարհման մեջ, որովհետև «քերականական բառաձևի գաղափարը պահանջում է, որ իբրև բայի ձևեր վերցվեն միայն պարզ ժամանակները: Իսկ եթե այդ բառաձևերը որևէ եղանակիչ բառով կամ մասնիկով նոր եղանակավորություն են առնում, դա բառաձևի հետ առնչություն չունի»²⁸, սակայն դրանք այնուամենայնիվ առնում է խոնարհման մեջ, նշելով, որ դրանք արդեն չեն գիտակցվում որպես ինքնուրույն միավորներ: Նույն տեսակետն է պաշտպանում Ն. Բարսեղյանը, ասելով, որ «չենք սխալվի, եթե կը և պիտի եղանակիչները համարենք երկրորդական ձևություններ, որոնք դրվելով խոնարհվող բայաձևի վրա, գործողության կատարման եղանակ են արտահայտում: ... Այդ երկու մասնիկն էլ ըստ էության արդեն միացել են բային և նրանցով եղանակի կատեգորիան ձևաբանական արտահայտում է ստանում, և ոչ թե շարահյուսական»²⁹: Ամեն դեպքում, պիտի-ով ձևերի եղանակային պատկանելությունը որոշելիս տարակարծությունները անհամեմատ ավելի քիչ են:

Եղանակային ձևերի դասակարգման տարաձայնությունների պատճառները մի քանիսը կարող են լինել, որոնցից առավել ուշադրության արժանի ենք համարում հետևյալները. ա) հնարավոր է, որ ավելի քան հարյուր տարվա ընթացքում զանազան պատճառներով եղանակային ձևերը փոխած լինեն իրենց գործածության ոլորտները, օրինակ, պիտի գեամ-ը, որ մեր ժամանակակից հեղինակների համար կրում է հարկադրանքի, պարտավորության իմաստ, Պալասանյանի և նրա ժամանակակիցների համար լինել գուտ սահմանական. բ) քանի որ գրեթե բոլոր եղանակների իմաստները կարելի է արտահայտել այլ եղանակների բայաձևերով, հնարավոր է, որ այս «փոխարինող» գործածությունը ժամանակի ընթացքում լայն տարածում գտնի և պատճառ հանդիսանա շփոթության մեջ գցելու լեզուն ուսումնասիրողներին կամ առիթ տա անճշտությունների այդ բայաձևերի հիմնական եղանակային իմաստը սահմանելիս. գ) լեզվաբանության մեջ արդեն ընդունված համակարգերը հաճախ չփոփոխելու «ավանդույթը» պահպանելու՝ լեզվաբանների գիտակցված կամ անգիտակից ձգտումը (այս երևույթը հատուկ է թերևս բոլոր քննազավառներին, հաճախ մերժ-

²⁵ Ռ. Իշխանյան, Արդի հայերենի հոլովումն ու խոնարհումը, Եր., 1971, էջ 112:

²⁶ Տե՛ս Հար. Պետրոսյան, Հայոց լեզվի գործնական քերականություն, Եր., 1927:

²⁷ Ն. Բարսեղյան, Ուլ. աշխ., էջ 251:

²⁸ Մ. Աբեղյան, Բայի եղանակներն արեւելեան աշխարհաբարում, «Արարատ» ամսագիր, 1912, № 3, էջ 268:

²⁹ Ն. Բարսեղյան, Ուլ. աշխ., էջ 230:

վում է որևէ երևույթի ավելի քանական, բայց նոր բացատրությունը): Թերևս դեր է խաղացել նաև վերջին տարիներին հաստատված սովորությունը՝ մեկ անգամ ընդունված հեղինակություններին այլևս հսկառակ կարծիքներ չհայտնելը, ինչպես, օրինակ՝ ենթադրական եղանակի ընդունումը ըստ Արեղյանի և ապա այդ եղանակը ենթադրական կամ պայմանական կոչելը, մինչդեռ կզմամ ձևերի ահմանական կիրառությունը անհամեմատ ավելի շատ է, քան ենթադրական իմաստով (եթե իհարկե կա նման իմաստով կիրառություն) և վիճելի է նրանց պայմանական իմաստով գործածությունը:

Այսպիսով, հայ լեզվաբանների աշխատությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այսօր միանշանակ չի կարելի խոսել անպայմանորեն հինգ եղանակի և անպայմանորեն սահմանական, հրամայական, ենթադրական (պայմանական), հարկադրական և ըզմական անվանումների մասին: Հետևաբար, այսօր դասագրքերում տրվող նման բաժանումը և նշված անվանումների տակ ընդունված բայաձևերի դասակարգումը չեն կարող գոհացնել: Թեև այլ լեզուների քերականական կառուցվածքների ուսումնասիրությունից ևս պարզ է դառնում, որ այս հարցին թերևս հնարավոր չէ տալ մի վերջնական, բոլորին բավարարող և բոլոր դեպքերն ընդգրկող լուծում, այնուամենայնիվ պարզ է նաև, որ մեզ այսօր այս հարցում անհրաժեշտ է առավել արդիական մոտեցում:

В. В. ГАБРИЕЛЯН—Вопрос наклонений в армянской лингвистике. В статье обобщаются подходы армянских лингвистов к вопросу наклонений в течение периода с 1819 года до наших дней. Анализ лингвистической литературы по данному вопросу показывает, что среди лингвистов нет единства в толковании понятия наклонения, и следовательно, в определении их числа и названий. В частности, расхождение мнений по поводу классификации форм կզմամ, կզմայի, պիտի գզմամ, պիտի գնայի не дает право безоговорочно говорить о наличии в армянском языке именно пяти наклонений, равно как о названиях «предположительное», «условное» и «поведительное», что оставляет вопрос наклонений в армянской лингвистике открытым для более современных подходов.